«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում

Հաստատություն՝ «Երևանի թիվ 140 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Արմինե Սամվելյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....3

2. Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում.....5

3. Գլուխ 2. Պարապմունքի նմուշ-օրինակ.....14

4. Եզրակացություն.....16

5. Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն՝

Վաղվա հասարակությանն անհարժեշտ են լինելու ստեղծագործական մտածողությամբ անհատականություններ՝ ընդանակ կառուցելու և բարեկարգելու «մոլորված աշխարհը»: Ժամանակակակից մանկավարժությունն իր անհատակողմնորոշիչ դիրքորոշումներով ուղղված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը:

Թեմայի նպատակը՝ ուսումնասիրել մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման վերաբերյալ գրականությունն ու այն կիրառել «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում:

Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում մանկավարժական աշխատողի մասասնագիտական կրթության որակի բարձրացումը: Մանկավարժի, ով արագ կհարմարվի նորամուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին:

Ժամանակը յուրաքանչյուր մանկավարժից պահանջում է ամենօրյա ինքնակրթություն: Ինքնակրթությունը նպատակաուղղված գործունեություն է, ինքնակառավորում, որն է՝ ոլորտի մասին գիտելիքի ձեռքբերումը: Չափազանց կարևոր է, որ կրթական գործընթացի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտ հստակ պատկերացնի իր մեթոդիկայի դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիաները և տեղն ու դերը մանկավարժական գործընթացում:

Վ. Սուխումլինսկին ասել է. «Արվեստը աշխարհաճանաչման միջոց է: Այն կոչված է կրթելու և դաստիարակելու մարդուն»:

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է վաղ մանկությունից և նախադպրոցական տարիքից: Այն անձի զարգացման կարևորագույն շրջան է, որի բնականոն ընթացքի և արդյունավետության ապահովումն էապես պայմանավորված է

երեխային շրջապատող միջավայրի ազդեցությամբ: Գեղեցիկ միջավայրը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:

Ցանկացած իրավիճակում դաստիարակը պետք է հաշվի առնի, որ նախադպրոցականի կերպարվեստային գործունեությունը կարևոր է երեխայի ակտիվ մասնակցության տեսանկյունից: Էական է նաև ուսուցանվող տեխնիկայի յուրացումը և կատարումը, այսինքն, գործունության ընթացքը: Իսկ արդյունքի որակական կողմը հետևողական աշխատանքի շնորհիվ կզարգանա:

ԳԼՈՒԽ 1

Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունտ «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում

Մեծագույն երջանկություն է կարողանալ տեսնել ու զգալ արվեստի գործը, խորանալ մեծ վարպետների ստեղծագործության մեջ:
Մարտիրոս Սարյան

Գեղագիտական զգացողությունները ձևավորվում են վաղ հասակից և շարունակում են զարգանալ մարդու մեջ ողջ կյանքի ընթացքում՝ հասնելով տարբեր մակարդակների և ցույց տալով մարդու գեղագիտական և հոգևոր զարգացման աստիճանը: Նախադպրոցական տարիքում գեղագիտական պահանջմունքի տարրերը ձևավորվում են շրջակա աշխարհի ճանաչման գործընթացում: Բազմաթիվ են շրջապատող աշխարհը ճանաչելու ձևերը, և դրանցից յուրաքանչյուրը գեղագիտական ընկալման հնարավորություն է ընձեռնում: Սակայն գեղագիտական դաստիարակության հիմքը կերպարվեստն է: Կարպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում: Միաժամանակ այն նպաստում է գեղեցիկի ընկալմանը և արթնացնում նման միջավայրում ապրելու ցանկություն, ինչն էլ վերածվում է պահանջմունք:

Կերպարվեստային գործունեությունը, որը ենթադրում է ծանոթացում զանազան գեղարվեստական նյութերին, խթանում է երեխայի հետաքրքրասիրությունը և շրջապատող աշխարհի ներևույթների նկատմամբ:

Այս ամենը երեխային հնարավորություն է տալիս ազատորեն արտահայտել իր զգացմունքներն ու ցանկությունները: Նրա համար խաղից և խոսքից հետո աշխարահաճանաչման հիմնական միջոցը դառնում է կերպարվեստային գործունեությունը:Գեղագիտական դաստիարակությունը գեղագիտական կրթության բաղկացուցիչ մասն է :Գեղագիտական կրթությունը ավելի լայն հասկացություն է, իր մեջ ներառող նաև արվեստի մասին լայնածավալ գիտելիքների համակարգ, որի ձևավորումը

դպրոցական սիստեմատիկ ուսուցման խնդիր է:Նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորմանը;

Գեղագիտական ուսուցման եղանակով իրականացվում են գեղագիտական դաստիարակության հետևյալ խնդիրները .

-նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը

-ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը

-ապլիկացիայի ուսուցումը

-կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը

-դեկորատիվ արվեստի տարերի ձևավորումը

-արտաքին և ներքին միջավայրի ձևավորման(դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը

-գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը

Գեղագիտական դաստիարակության բովանդակությունը նախադպրոցական տարիքում հիմնականում կառուցվում է այս խմբի խնդիրների հիման վրա, մշակվում ենծրագրեր և տեխնոլոգիաներ ` ուղղված նախադպրոցականի գեղագիտական տարբեր կարողությունների ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության միջոցներն ու մանկավարժական պայմանները ունեն համատեղ ներգործություն երեխայի գեղագիտական զարգացմանը: Դրանք գործում են միասնաբար: Հաճախ գեղագիտական դաստիարակության մանկավարժական պայմանը վերածվում է միջոցի,իսկ միջոցը երկարատև կիրառման պարագայում դառնում է դաստիարակության անհրաժեշտ պայման: Գեղագիտական դաստիարակության մանկավարժական պայմանները կոչված են ապահովելու գեղագիտական դաստիաչակության միջոցների կիրառման համար անհրաժեշտ միջավայր և մթնոլորտ,դրանք նպատակային մանկավարժական աշխատանքի համար նախադրյալներ են:

Գեղագիտական դաստիարակության հիմնական մանկավարժական պայմանը արվեստի ստեղծագործություններով հարուստ գեղագիտական միջավայրի , կենցաղի գեղագիտության ապահովումն է:Հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ:Ամենօրյա շփումը

գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը,գեղեցիկի կառուցմանը ,ստեղծմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

Գեղագիտական դաստիարակության կարևորագոիյն պայմաններից է բնության հետ երեխայի շարունակական շփման ապահովումը: Բնության գրկում գտնվելը հնարավորություն է տալիս երեխային բնազդաբար զգալու բնության ամբողջական ներդաշնակ գեղեցկությունը,ակամայից առնչվելու գեղեցկության բազմաթիվ նմուշների հետ: Գեղագիտական դաստիարակությանը նպաստող ամենալավ միջավայրը հայրենի բնությունն է<<այն կենսահյութն է , որը մշտապես գաղափար և նյութ է դառնում դաստիարակության իրականացման համար: Հայրենի բնությունն իր ազգամշակութային բազմադարյա շերտերով, քարակերտ և ձեռակերտ կոթողներով , ազգի պատմությամբ, լեզվով և կենցաղով ընդհանրական ձևով հենք են հանդիսանում գեղագիտական դաստիարակության համար:

Հզոր է արվեստի ներգործությունը գեղագիտական դաստիարակության ընթացքում : Արվեստն, ինչպես և բնությունն, իր մեջ ներառում է մարդկության հավաքական գեղեցկության տարրեր որոնք , ընկալելի են և ընդունելի են բոլորի կողմից: Արվեստի գեղեցկությունն ընդունակ է նկատելու և հասկանալու նաև նախադպրոցահասակ երեխան: Արվեստի յուրաքանչյուր ճյուղ իր մեջ ներառում է արվեստի բոլոր տեսակների տարրեր և գործում է դրանց ներդաշնակ համակցության շնորհիվ:Այսպիսով, արվեստի ստեղծագործություններով հագեցած միջավայրը նախադպչոցականի գեղագիտական դաստիարակության կարևոր մանկավարժական պայման է , իսկ երեխային արվեստի բոլոր տեսակներին հաղորդակից դարձնելու կազմակերպված գործընթացը գեղագիտական դաստիարակության հզոր միջոց: Արվեստի հետ հաղորդակումը երեխային սովորեցնում է տեսնել իրական կյանքի գեղեցկությունը, տարբերել գեղեցիկը տգեղից և ընտրովի վերաբերվել կյանքի բազմազանությանն ու բազմերանգությանը:

Անհրաժեշտ է կերպարվեստին ծանոթացումը և կերպարվեստային աշխատանքը կազմակերպել՝ ստեղծելով խաղային իրավիճակ: Այս պարագայում ուսուցումը տեղի է ունենում ինքնակամ և երեխայից չի պահանջում մտավոր լարվածություն:

Ինչպիսին էլ լինի աշխատանքի վերջնարդյունքը, միևնույն է, դա երեխայի զգայական ընկալման պատկերն է, որը ուրախություն և հիացմունք է պարգևում հենց իրեն՝ երեխային:

Ցանկացած իրավիճակում դաստիարակը պետք է հաշվի առնի, որ նախադպրոցականների կերպարվեստային գործունեությունը կարևոր է երեխայի մասնակցության ցանկացած տեսանկյունից: Էական է նաև ուսուցանվող տեխնիկայի յուրացումը և կատարումը, այսինքն՝ գործունեության ընթացքը: Իսկ արդյունքի որակական կողմը հետևողական աշխատանքի շնորհիվ աստիճանաբար կզարգանա: Այս գործընթացը շարունակական է. Ձգվում է մինչև ավագ խումբ և շարունակվում կրտսեր, միջին, ինչպես նաև դպրոցական տարիքներում և նույնիսկ մինչև կյանքի վերջ: Սակայն դա չի նշանակում, որ երեխաներին չի ներկայացվում յուրացման մակարդակը սահմանող պահանջ:

Յուրաքանչյուր տարիքային խմբի կրթական ծրագիր, առաջադրվելով գործունեության այս կամ այն ձևը, սահմանում է նաև չափորոշիչային պահանջները:

Չափորոշիչային պահանջները կօգնեն դաստիարակին հստակեցնել կերպարվեստային աշխատանքներն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս պատկերացնել, թե կոնկրետ ինչ պետք է սովորի երեխան տվյալ տարիքային խմբում: Եվ եթե հաջորդ տարիքային խմբում հայտնվում է նոր երեխա, որն ինչ-ինչ պատճառներով չի յուրացրել նախորդ տարվա չափորոշիչային պահանջները, ապա նրա հետ անհրաժեշտ է կազմակերպել անհատական պարապմունքներ: Անհրաժեշտ է կապ հաստատել նաև տվյալ երեխայի ծնողների հետ, որպեսզի հնարավորինս արագ նա հասնի հասակակիցների զարգացման մակարդակին: Այլապես տվյալ երեխան չի կարողանա ընկալել և յուրացնել այդ տարիքային խմբի ծրագրային նյութը: Այս մոտեցումը վերաբերվում է կերպարվեստային բոլոր ձևերին:

Ավելի պարզ լինելու համար փորձենք կերպարվեստը համեմատել երաժշտության հետ: Որ տարիքից էլ մարդը ցանկանում է ուսումնասիրել երաժշտություն, այդ գործընթացն սկսվում է նոտաների ծանոթացումից: Նույնը տեղի է ունենում

կերպարվեստում. այստեղ նոտաների փոխարեն պետք է ծանոթացնել կերպարվեստային նյութերին, սովորեցնել դրանցից օգտվելու կանոնները, ձևավորել նախնական կարողություններ ու հմտություններ: Այս ամենը չափորոշիչային պահանջների միջոցով սահմանված է կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագրում: Իսկ դա նշանակում է, որ կերպարվեստային ծրագիրն այս տարիքային խմբում հիմք է բոլոր այն երեխաների համար, ովքեր առաջին անգամ են ծանոթանում ծեփին, նկարչությանը և այլ կերպարվեստային ձևերին:(1)

Երեխաների դաստիարակության յուրաքանչյուր տարվա ծրագիր հիմնվում է նախկինում արդեն ձեռք բերվածի վրա և ընդգրկում է այն, ինչ առաջիկայում պետք է յուրացվի: Յուրաքանչյուր խմբում երեխաները ոչ միայն յուրացնում են նոր գիտելիքներ, եռք բերում նոր հմտություններ և ունակություններ, այլև կատարելագործում, ամրապնդում են ձեռք բերածը: Որքան լավ պատրաստված լինի դաստիարակը, որքան հարուստ լինի նրա մանկավարժական և ընդհանուր գիտելիքների պաշարը, շատ ու բազմակողմանի հմտություններ ունենա, այնքան բովանդակալից և հետաքրքիր կլինի երեխաների ինքնուրույն գործունեությունը: Նոր խնդիրների հաջող լուծումն ի վերջո կախված է դաստիարակից՝ այն բանից, թե որքան խորն է նա ուսումնասիրել ծրագիրը և որքան մանրազնին է նախապատրաստել դրա իրականացմանը: Մանկապարտեզում մանկավարժական գործընթացի կազմակերպիչն ու ղեկավարը դաստիարակն է:

Դաստիարակը երեխային պետք է վերաբերվի որպես հավասարի, որն ունի իր սեփական ցանկություններն ու հետաքրքրությունները, նախասիրությունները: Այդ իմաստով սկզբունքորեն փոխված է դաստիարակ- երեխա փոխհարաբերությունը, որը նոր խնդիրներ է դնում դաստիարակի առջև:

Նոր ծրագրով աշխատող դաստիարակը ստեղծագործելու ազատության հնարավորություն ունի, որը կբարձրացնի նրա պատասխանատվությունն իր աշխատանքի նկատմամբ, կընդլայնի նրա պատկերացումները յուրաքանչյուր երեխայի զարգացման մակարդակի և որակի մասին: Այդ բոլորը կնպաստեն նաև դաստիարակի մտահորիզոնի ընդլայնմանը , նրա ընդհանուր զարգացմանը և իր աշխատանքի սոցիալական նշանակության ընկալմանը:

Երեխայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման մոտեցմամբ (անհատական կողմնորոշման սկզբունքով, միշտ հիշելով, որ երեխան անհատականություն է, իսկ յուրաքանչյուր երեխա դաստիարակից պահանջում է անհատական մոտեցում, և չպետք է սահմանափակվել վարչական հրահանգներով, կամ կանոնակարգային հարցերի լուծման հետ) դաստիարակի դիրքորոշումը կհանգեցնի ուսուցման և դաստիարակության արդյունավետության բարձրացմանը, մեծահասակի նկատմամբ երեխայի վստահության խնդրի լուծմանը: Առաջնորդվելով անհատակողմնորոշիչ մոդելով, որի նպատակն է անհատի ձևավորումը, դաստիաակը երեխայի զարգացումը չի

հարմարեցնում եղած ծրագրին, կանոններին, այլ երեխային օգնում է և նախազգուշացնում՝ կանխելու նրա անհատական զարգացման հնարավոր դժվարությունների առաջացումը: Երեխային տրվում է ազատ զգալու և գործելու հնարավորություն: Գիտելիքները և հմտությունները դիտվում են ոչ թե նպատակ, այլ անհատի զարգացման միջոց:

Դաստիարակը երեխայի ուսուցումը և դաստիարակությունն իրականացնում է հաղորդակցման, շփման եղանակով, որի ընթացքում նա ուսումնասիրում է երեխային, բացահայտում նրա նախասիրություններ, համատեղ գործելով հայտնվում է նրա դիրքում, հաշվի առնում տեսակները, զգացմունքները, հույզերը՝ երբեք չանտեսելով դրանք:

Դաստիարակի շփման դիրքորոշումն է՝ ելնել երեխայի շահերից և նրան տեսնելով որպես մեր հասարակարգի լիարժեք անդամ:

Դաստիարակին անհրաժեշտ մասնագիտական հմտությունները՝

- գրագետ է, ազատ տիրապետում է հայերեն գրավոր և բանավոր խոսքին:
- կարողանում է աշխատել համակարգչով, օգտվել համացանցից /ինտերնետից/
- տիրապետում է մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաների, մեթոդների
- ազատ է մտածում, հարգում է իր սաների ազատությունը
- նախաձեռնող է, պրպտող, ստեղծող-ստեղծագործող:

Մասնագիտական զարգացում

- մասնակցում է մասնագիտական որակավորման բարձրացման սեմինարների
- զբաղվում է հհետազոոտական աշխատանքով
- զբաղվում է ինքնակրթությամբ

Ոչ ոք չի կարող ուրիշին փոխանցել այն, ինչ ինքը չունի և բացատրել այն, ինքը չի յուրացրել:

Մանկապարտեզի կյանքի շարժիչ ուժերը՝ որպես մանկական համայնքի կազմակերպիչներ, դաստիարակներն են: Դաստիարակը ղեկավարվում է ծրագրով և այն կենսագործում է պլանավորման միջոցով: Դաստիարակն իր մեջ պետք է միավորի և' դիտողի, և' մանկավարժի գործառույթները, որոնք անբաժանելի են միմյանցից; Նա պետք է հետևի իր խմբի երեխաների մտավոր զարգացման դինամիկային: Դաստիարակի հիմնական խնդիրը առաջադրանքների լուծման ճանապարհին

կողմնորոշվելն է, քանի որ այդ խնդիրներն ուղղորդված են երեխաների զարգացմանը, առաջարկվող բովանդակության ըմբռնմանը:(1)

1.Հ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2010 էջ՝ 116

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում իր կայուն տեղն է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը: Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը: Ակտիվացնում է նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության:

Գեղագիտական դաստիարակությունը բացահայտում է նախադպրոցականի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Նախադպրոցական տարիքում այն պետք է ուղղված լինի երեխայի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Գեղեցիկ միջավայրի երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է ու միջոցը: Այն երկարատև գործընթաց է, որը պետք է իրականացնել նաև կերպարվեստային գործունեության տարբեր տարիքայի փուլերում:

Գեղագիտական դաստիարակության բնագավառում կարևոր տեղ է զբաղեցնում կերպարվեստային գործունեությունը, որը որոշիչ նշանակություն ունի նախադպրոցականի ներդաշնակ զարգացման գործընթացում:

Դաստիարակի կերպարվեստային գործունեության հիմնական նպատակն է՝

- զարգացնել երեխաների գեղարվեստական ստեղծագործական ունակությունները
- առաջացնել հետաքրքրությունը նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների նկատմամբ
- ձևավորել՝ առարկայի ձևը, գույնը տեսնելու, զգալու և վերարտադրելու կարողություն
- երեխաների մեջ զարգացնել գեղեցիկի ընկալումներ, գեղագիատական զգացմունքներ, պատկերացումներ
- երեխաներին մերձեցնել արվեստին՝ նրանց փոխանցել գեղագիտական տարրական գիտելիքներ և գործնական հմտություններ

- ձևավորել երեխաների գեղագիտական ճաշակը և նպաստել, որ ինքնուրույն գնահատեն արվեստի գործերն ու կյանքի երևույթները
- զարգացնել երեխաների գեղարվեստաստեղագործական ունակությունները
- երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների ու առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունքի զարգացումը
- երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը:(1)

Դաստիարակի խնդիրն է օգնել ամրապնդել մատիտը ճիշտ բռնելու կարողությունը, վրձինը խնամքով օգտագործել ներկանյութերը, կոկիկ պահել աշխատանքային սեղանը, պարապմունքի ավարտին կարգի բերել իրերը և դնել տեղը:

Յուրաքանչյուր պարապմունքի սկզբում դաստիարակը նախ և առաջ առաջարկում է ուսումնասիրել հանձնարարությունը, ապա հուշում երեխայի անելիքը: Հետագայում, երբ երեխան հմտանում է, աստիճանաբար այդ գործողությունը կատարում է ինքնուրույն, դաստիարակը պարզապես հետևում է նրան: Ինքնուրույն նկարչության փուլում երեխան սսսովորում է նաև ավելացնել նոր դետալներ՝ ըստ ցանկության: Յուրաքանչյուր էջի վերջում, ազատ շրջանակում երեխան կարող է նկարել ինչ ցանկանում է, հորինել նորը, ամրապնդել սովորածը:

Դաստիարակը պետք է հիշի.

- ոչինչ չանել երեխայի փոխարեն, հուշումները կատարել փորձաթղթի վրա
- խրախուսել երեխայի նույնիսկ ամենափոքր ձեռքբերումը, չհամեմատել երեխաների ընկերների հետ
- սովորեցնել ներկայացնել իր կատարած աշխատանքը:

Սովորեցնել նկարել կետեր, գծեր, աղեղներ, կոր գծեր, ալիքաձև գծեր, հորզոնական և ուղղահայաց գծեր, մեծ և փոքր տարբեր չափերի շրջաններ, գունավորել պատկերներ:

1.Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների)կրթական համալիր ծրագիր, էջ՝92,93

Մատիտի թույլ և ուժեղ սեղմումներով տանել տարբեր գծեր՝ հաստ և բարակ, կարճ և երկար, ուղիղ, թեք կարճ գծեր, վերևի ձախ անկյունից դեպի ներքևի աջ անկյունը և հակառակ ուղղությամբ, գունավոր թղթի վրա նկարել տարբեր գույներով:

Երեխան պետք է հասկանա իր նկարած պատկերի որոշակի իմաստը, նկարի լույսը և ստվերը :

Վրձինով նկարչությունը սկսելուց առաջ երեխայի ուշադրությունը պետք է հրավիրել նստած դիրքի, նկարչական պարագաներից ճիշտ օգտվելու կանոններին, նկարելու ճիշտ տեխնիկայի՝ վրձնահպումների կատարմանը, տանել գծեր ազատ և վստահ, նկարեկ կետեր, բծեր, շրջանաձև պատկերներ, ուղղանկյուններ, մեծ և փոքր առարկաներ, բնության երևույթներ: Երեխան ազատ է գույների ընտրության մեջ, խաղալով գույներով և ստանալով նոր գույներ, նրա մոտ զարգանում է գույնի ընկալումը և գույնի զգացողությունը, պարգևլու ուրախություն և զվարճանք:

Ձախլիկները նկարում են ձախ ձեռքով: Հետևաբար, եթե խմբում կան ձախլիկներ, ապա նրանց չպետք է արգելել, այլ պետք է թույլ տալ և օգնել, որ աշխատեն ձախ ձեռքով: Դաստիարակը պետք է սովորեցնի մատիտը ձախով բռնելու և նկարելու ձևերը: Այն է՝ նկարելու համար պետք է իրանը ուղիղ, աջ ձեռքը հանգիստ դնել սեղանին դրված թղթին (դա հենման կետն է), իսկ ձախով բռնել մատիտը: Մատիտը պետք է բռնել կենտրոնից ոչ շատ վերևից, կամ ներքևից՝ ճկույթի, մատնեմատի և միջնամատի ուղղությամբ, այնպես, որ հարմար լինի մատիտով գծեր քաշել:

Ձախ ձեռքով աշխատող երեխաները պետք է պահպանեն մատիտով աշխատելու կանոնները: Այսպիսով՝

- Ձախլիկի մատիտի գլխիկը պետք է նայի արմունկին(աջլիկի մատիտը պետք է նայի ուսին կամ ուղիղ)
- Նկարելու ընթացքում ձախ ձեռքի վերջին երկու մատները պետք է հենվեն թղթին
- Ձախլիկը պետք է նստի սեղանի ձախ անկյունում

Սովորաբար ձախլիկները նկարում եմ այն ձեռքով, որը առավել հարմար է իրենց:(1)

1.Ժաննա Ավետիսյան «Կերպարվեստ» սովորում ենք նկարել 3-4 տարեկանում էջ՝ 8

ԳԼՈՒԽ 2
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿ

Տեսակը՝ առարկայան նկարչություն

Թեմա՝ «Գունավոր թելի կծիկներ»

Նպատակը՝ սովորեցնել երեխաներին գունավոր մատիտներով թղթի վրա չընդատված գծերի միջոցով կատարել շրջանաձև շարժումներ և ստանակ թելի կծիկ /առանց մատիտը թղթի վրայից վերցնելու/: Կարողանալ ճիշտ բռնել մատիտը, մյուս ձեռքը խմանքով դնել թղթի վրա: Զարգացնել գունազգացողությունը: Կարողանակ հաճույք ստանակ սեփական աշխատանքից:

Անհրաժեշտ պարագաներ

Գունավոր մատիտներ / 2-3 գույնի, տարբեր գույնի թելերի կծիկներ, թղթեր՝ յուրաքնչյուր երեխայի համար, խաղալքիք փիսիկ կամ նկար:

Պարապմունքի անցկացման մեթոդիկան

Գրավելով երեխաների ուշադրությունը՝ դաստիարակն ասում է, որ այսօր իրենց հյուր է եկել փիսիկը:

-Մեր փիսիկը շատ է սիրում խաղալ գնդակով, նարինջով, թելի կծիներով: Սակայն տատիկն արգելում է նրան մոտենալ դրանց: Քանի որ փիսիկն այսօր մեզ հյուր է, մենք նրան անակնկալ կմատուցենք: Ես ինձ հետ բերել եմ գույնզգույն թելերի կծիկներ՝ դեղին, կարմիր, կապույտ: Մենքք կփորձենք նկարել գունար այդպիսի շատ կծիկներ և նվիրել փիսիկին: Իսկ ողջ պարապմունքի ընթացքում նա կհետևի, թե ինչպես եք դուք աշխատում:

Նախ երեխաներին ցուցադրել թելի կծիկները, բացատրել, թե ինչպես են թելից ստանում կծիկ:ապա օդում ձեռքով կատարել համապատասխան շարժումներ:

Մինչ երեխաների նկարելը, գրատախտակի վրա ցուցադրել, թե ինչպես պետք է աշխատել. մատիտը դնել թղթին և այդ կետից շրջանաձև շարժումներով, առանց **մատիտը** թղթից վերցնելու և առանց ընդհատումների, աստիճանաբար մեծացնել այն:

Օդում ևս մեկ անգամ խմբով կատարել համապատասխան շարժումներ:

Առաջարկվում է աշխատել գունավոր մատիտներով: Ընթացքում դաստիարակն օգնում է դժվարացողներին:

Քննարկման ժամանակ խրախուսվում են բոլորը: Դաստիարակն ասում է ,որ փիսիկն իրենցից շատ գոհ մնաց («Նա հիմա շատ ուրախ է, որովհետև արդեն ունի գեղեցիկ, գույնզգույն թելի կծիկներ»):

Կապը այլ պարապմունքների և գործունեության այ ձևերի հետ

Օրվա տարբեր ժամերի երեխաներին ծանոթացներ կլոր ձև ունեցող տարբեր, գույների առարկաներին, դրանց հետ կազմակերպել խաղեր և զվարճանքներ: Զրուցել նաև այն մասին, թե ինչ կարելի է գործել թելերով /գլխարկ, ձեռնոցներ, շարֆ.../, հարցնել՝ ում տատիկն է կարողանում գործել:

Տրամադրել գունավոր թելեր և երեխաներին առաջարկել ստանալ կծիկներ: Վերհիշել ոտանավորներ՝ փիսիկի մասին:

Փիսո /Գևորգ Գեղունի/

Ա՛յ դու փիսո, չգիտես,
Որ ինձ նման փոքրիկ չես,
Բեղերիցդ ամաչի՞ր,
Տատի գոգից վայր իջի՞ր:

Մռռանը/ Ժ. Կոնդակչյան/

Մյա՛ու, մյա՛ու, մյա՛ու,
Մլավում է մռռանը
Մութ անկյունում մառանի
Կուչ է եկել ճստանը:

Փիսիկ/ Աթ. Խնկոյան/

Փիսի՞կ. փիսի՞կ, չալ պոչիկ,
Փոքրիկ, սիրուն, խուճուճիկ,
Փիսի՞կ, փիսի՞կ, շուտ արի՞
Մեր Լուսիկին օրորի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ են շրջապատող աշխարհը ճանաչելու ձևերը, և դրանցից յուրաքանչյուրը գեղագիտական ընկալման հնարավորություն է ընձեռնում: Սակայն գեղագիտական դաստիարակության հիմքը կերպարվեստն է:

Ցանկացած իրավիճակում դաստիարակը պետք է հաշվի առնի, որ նախադպրոցականի կերպարվեստային գործունեությունը կարևոր է երեխայի ակտիվ մասնակցության տեսանկյունից: Էական է նաև ուսուցանվող տեխնիկայի յուրացումը և կատարումը, այսինքն, գործունության ընթացքը:

Յուրաքանչյուր տարիքային խմբի կրթական ծրագիր, առաջադրվելով գործունեության այս կամ այն ձևը, սահմանում է նաև չափորոշիչային պահանջները:

Որքան լավ պատրաստված լինի դաստիարակը, որքան հարուստ լինի նրա մանկավարժական և ընդհանուր գիտելիքների պաշարը, շատ ու բազմակողմանի հմտություններ ունենա, այնքան բովանդակալից և հետաքրքիր կլինի երեխաների ինքնուրույն գործունեությունը:

Առաջնորդվելով անհատակողմնորոշիչ մոդելով, որի նպատակն է անհատի ձևավորումը, դաստիաակը երեխայի զարգացումը չի հարմարեցնում եղած ծրագրին, կանոններին, այլ երեխային օգնում է և նախազգուշացնում՝ կանխելու նրա անհատական զարգացման հնարավոր դժվարությունների առաջացումը: Երեխային տրվում է ազատ զգալու և գործելու հնարավորություն:

Դաստիարակի կերպարվեստային գործունեության հիմնական նպատակն է զարգացնել երեխաների գեղարվեստական ստեղծագործական ունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ, Միտոյան, Լ, Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2010
2. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր,3+
3. Լ. Վերդյան «Կերպարվեստ» նկարչության աշխատանքային տետր մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի համար(3-4 տարեկան),Մարի հրատարակչություն
4. «Նախաշավիղ» ամսագիր 5. 2014
5. Ժ. Ավետիսյան «Կերպարվեստ» սովորում ենք նկարել 3-4 տարեկանում